ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքում

կայացած հանրային լսումների

գ. Աղավնաձոր 01.03.2024թ

Հանրային լսումների մասնակցում էին "Ավանգարդ Ինվեսթ" ՓԲԸ-ի տնօրենի լիազորած անձ՝ Արմեն Դավթյանը, ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավար՝ Նարեկ Հարությունյանը, համայնքի բնակիչներ՝ Ատոմ Մխիթարյանը, Համլետ Մանուկյանը, Բագրատ Սարիբեկյանը, Վիկտոր Ստեփանյանը, Ալեքսան Ղազարյանը, Ստեփան Հարությունյանը, Անդրազ Հարությունյանը, Կարեն Պողոսյանը, Արթուր Մնացականյանը, Գուրգեն Ոսկանյանը, Մկրտիչ Վարդանյանը, Ռոմեր Ալեքսանյանը, Մերուժան Հովհաննիսյանը, Սասուն Բարխոյանը, Վարուժան Ղազարյանը:

"Ավանգարդ Ինվեսթ" ՓԲԸ-ի տնօրենի լազորած անձը ներկայացրեց, որ համայնքի վարչական սահմաններում ընկերությունն իրականացնելու է հանքարդյունահանման աշխատանքներ Աղավնաձորի գրանոդիորիտների հանքավայրում: Հանքավայրի շահագործումը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը: Աշխատանքի մեջ կընդգրկվեն հիմնականում համայնքի և հարակից գյուղերի բնակիչները: Ընկերությունը կապահովի բնապահպանական բոլոր նորմերի պահպանումը ակտիվորեն կմասնակցի համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման աշխատանքներին:

Ելույթներ ունեցան համայնքի բնակիչներ՝ Համլետ Մանուկյանը, Ատոմ Մխիթարյանը:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները համայնքի ղեկավար Նարեկ Հարությունյանը նշեց աշխատանքների կարևորությունը համայնքի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման համար: Փաստվեց նաև, որ աշխատանքների ընթացքում պետք է պահպանվեն համայնքի բնակիչների շահերը և համայնքը տալիս է իր

համաձայնությունը Ընկերությանը սահմանված կարգով իրականացնելու հանքավայրի շահագործման աշխատանքները համաձայն նախագծի:

Ծաղկաձոր համայնքի ղեկավար՝ Ն. Հարությունյան

"Ավանգարդ Ինվեսթ" ՓԲԸ-ի տնօրենի լիազորած անձ՝ Ա. Դավթյան